



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 13.01.2023թ. ԹԻՎ 2/3-Լ  
ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Գայանե Դեմիրջյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանջյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգարյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/3-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության» կարգում (**այսուհետ նաև՝ Կարգ**) փոփոխություններ կատարելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 21-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի և Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 49-րդ ենթակետի պահանջներով,

11 ձայներից՝ 8 կողմ և 3 դեմ,

### Ո Ր Ո Շ Ե Ց՝

#### 1. Կարգի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Հանձնաժողովի հինգ փաստաբան անդամները ընտրվում են Պալատի նախագահի առաջադրմամբ՝ արտոնագիրը չկասեցված, բարձր մասնագիտական որակներով օժտված և առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական ստաժ (այդ ժամանակահատվածի մեջ չի ներառվում փաստաբանի արտոնագրի կասեցված ժամանակահատվածը) ունեցող փաստաբանների կազմից: Սույն կետում նշված փաստաբանական ստաժի սահմանափակումը չի տարածվում գիտական ասպիրանտ ունեցող փաստաբանի նկատմամբ:»:

**2. Ինկորպորացված Կարգը տեղադրել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:**

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

**14 մարտի 2023թ.**

**թիվ 7/9-L**

**ք. Երևան**